ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N 19

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ և ԱՆՎՃԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. թիվ 1910-Ն որոշման պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Հաստատել համայնքում հուղարկավորությունների հետ կապված վճարովի և անվճար ծառայությունների ցանկը՝ համաձայն հավելվածի /կցվում է/ :

2. Առաջարկել համայնքի ղեկավարին կայացնել որոշում գերեզմանատան վճարովի հողատարածքի արժեքը սահմանելու մասին :

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

2. ՍԻԱՆՈՍՅԱՆ ՎԱՉԳԵՆ

3. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

4/27/2015

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ

Հավելված
Նոր Կյուրին համայնքի ավագանու
2015թ. ապրիլի 27-ի N 19 որոշման

Համայնքի ղեկավար՝ Գ. Օհանյան

ՑԱՆԿ

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ և ԱՆՎՃԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1,Համայնքում մեկ անձին հողին հանձնելու համար անվճար տրամադրում է 2,5 քմ տարածք, ընտանեկան գերեզմանոցի համար՝ 12 քմ, իսկ գերեզմանի եզրերը և բարեկարգման աշխատանքները կատարում են հարազատները սեփական միջոցներով:

2,Ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար վճարովի տարածք հատկացվում է չորսից ավելի անդամ ունեցող ընտանիքներին՝ միայն որպես գերեզմանատեղ օգտագործելու իրավունքով: Վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի առավելագույն չափը սահմանվում է 10,0 քառ. մետր:

3, Վճարովի հողատարածքը հատկացվում է բաց գերեզմանատներում հերթական թաղում իրականացնելու ժամանակ գոյություն ունեցող գերեզմանին կից ազատ տարածքի առկայության դեպքում և նոր ընտանեկան գերեզման հատկացնելու դեպքում՝ ըստ գերեզմանատան հողերի օգտագործման հաստատված հատակագծի (սխեմայի) և թաղումների հերթականության:

4. Արգելվում է վճարովի հողատարածքների հատկացումը մասնակի փակ գերեզմանատներում:

5. Գոյություն ունեցող գերեզմանին կից վճարովի հողատարածքի հատկացումը չպետք է խախտի գերեզմանատան հողերի օգտագործման հատակագիծը (սխեման) և խոչընդոտի հարևան գերեզմանների ու անցումների օգտագործումը:

6. Բաց կամ նոր կազմավորվող գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծում (սխեմայում), ելնելով տեղական պայմաններից, կարող են նախատեսվել առանձին հատվածներ (ծառուղիներ)՝ ընտանեկան գերեզմանների կազմավորման համար, ներառյալ վճարովի հողատարածքները:

7. Գերեզմանատան տնօրինությունը, եթե գոյություն չունի նման ստորաբաժանում , ապա՝ համայնքի գյուղապետարանը , վճարովի տարածքը հատկացնում է հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի դիմումի և մահացածի ընտանիքի անդամների կազմի մասին համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

8. Վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի արժեքը որոշում է համայնքի ղեկավարը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը)՝ օրենքով սահմանված կարգով, ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակիցների:

9. Հատկացված հողատարածքի արժեքը վճարվում է համայնքի բյուջե (Երևանում՝ Երևանի քաղաքապետարան), կատարված վճարման դիմաց տրվում է անդորրագիր: Ստացված միջոցներն օգտագործվում են գերեզմանատների պահպանման ու շահագործման համար:

10. Գերեզմանատան տնօրինությունը վճարման անդորրագրի հիման վրա համապատասխան նշում է կատարում գերեզմանատան հողերի օգտագործման հատակագծում (սխեմայում) և գրանցում գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման ու թաղումների գրանցման մատյանում և գերեզմանի վկայականում:

11. Գերեզմանատան տնօրինության ներկայացուցիչը հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի հետ տեղում նախանշում է վճարովի հողատարածքի տեղը, չափերը և սահմանապյուներով նշում գերեզմանի սահմանները: